# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 898-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

____________________2025 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 898-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի «**Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության տարածք արտահանվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքում մնացորդային նյութերի հսկողության, կենդանական ծագում ունեցող մթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային առավելագույն քանակները, մնացորդային նյութերի նկատմամբ հսկողության իրականացման համար անհրաժեշտ նմուշառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի N 1196-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու**» 898-Ն **որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.**

1) որոշման N 1 հավելվածի լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 49.1-ին կետով՝

«49.1. Արգելված հակամանրէային միջոցներ կամ հակամանրէային միջոցների խմբեր

| Հակամանրէային միջոցներ և հակամանրէային միջոցների խմբեր) | Մնացորդային առավելագույն քանակը՝<br><br>չհաշված տվյալ նյութի բացահայտման լաբորատոր մեթոդի զգայունության կամ օրգանիզմում բնական առկայության հայտնաբերման նվազագույն քանակությունը | Տեղակայումը՝<br><br>հյուսվածքներ, պարենքիմատոզ օրգաններ և կենդանական ծագում ունեցող մթերք | Այլ նշումնե |
|---|---|---|---|
| **Հակաբիոտիկներ** | | | Հակամանր հակամանր ույլատրվու կան դեղա կամ դեղայ<br><br>Կենդանինե է օգտագոր նախատես որոնք պար թվարկված կամ հակա խմբերից ո |
| Կարբօքսիպենիցիլիններ | 0 | - | |
| Ուրեիդոպենիցիլիններ | 0 | - | |
| Ցեֆտոբիպրոլ | 0 | - | |
| Ցեֆտարոլին | 0 | - | |
| Ցեֆալոսպորինների և բետա-լակտամազի ինհիբիտորների համակցություններ | 0 | - | |
| Սիդերոֆոր ցեֆալոսպորիններ | 0 | - | |
| Կարբապենեմներ | 0 | - | |
| Պենեմներ | 0 | - | |
| Մոնոբակտամներ | 0 | - | |
| Ֆոսֆոնաթթվի | 0 | - | |

| | | |
|---|---|---|
| ածանցյալներ | | |
| Գլիկոպեպտիդներ | 0 | - |
| Լիպոպեպտիդներ | 0 | - |
| Օքսազոլիդինոններ | 0 | - |
| Ֆիդաքսոմիցին | 0 | - |
| Պլազոմիցին | 0 | - |
| Գլիցիլցիկլիններ | 0 | - |
| Էրավացիկլին | 0 | - |
| Օմադացիկլին | 0 | - |
| **Հակավիրուսային դեղամիջոցներ** | | |
| Ամանտադին | 0 | - |
| Բալոքսավիր մարբոցիլ | 0 | - |
| Ցելգոսիվիր | 0 | - |
| Ֆավիպիրավիր | 0 | - |
| Գալիդեսիվիր | 0 | - |
| Լակտիմիդոմիցին | 0 | - |
| Լանինամիվիր | 0 | - |
| Մեթիսազոն/մետիսազոն | 0 | - |
| Մոլնուպիրավիր | 0 | - |
| Նիտազոքսանիդ | 0 | - |
| Օսելտամիվիր | 0 | - |
| Պերամիվիր | 0 | - |
| Ռիբավիրին | 0 | - |
| Ռիմանտադին | 0 | - |
| Տիզոքսանիդ | 0 | - |
| Տրիազավիրին | 0 | - |
| Ումիֆենովիր | 0 | - |
| Զանամիվիր | 0 | - |
| **Հակապրոտոզոալներ** | | |
| Նիտազոքսանիդ | 0 | - |

»:

2) որոշման N 2 հավելվածի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Սույն կարգով չկարգավորված նմուշառման ընթացակարգերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ** **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**